

LA CHRONIQUE ATTRIBUEE AU CONNETABLE SMBAT. *Introduction, traduction et notes par Gérard Dédéyan*, Paris, 1980, p. 139.

ՍՄԲԱՏ ԳՈՒՆԴՍԱՐԷԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ («ՏԱՐԵ-ԳԻՐԲ»), ՆԵՐԱԾՈՒՅՈՒՆԸ, ԹԱՐԳՄԱՆՈՒՅՈՒՆԸ և ԺԱՆՈՒՐԱԳՐՈՒՄՆԵՐԸ ԺԵՐԱՐ ԴԵՂԵՅԱՆԻ, Փարիզ, 1980, 139 էջ:

Վերջին տասնամյակներին թե՛ հայ և թե՛ օտար մասնագետների շրջանում Սմբատ Սպարապետի (Գունդսարբի) կյանքի ու մատենագրական ժառանգության հետազոտության բնագավառում որոշակի աշխուժացում է նկատվում: Այդ են վկայում «Դատաստանագրքի» հայերեն բնագրի (1956 թ., Երևան, ղուգահեռ ուսերեն թարգմանությամբ, հրատարակիչ և թարգմանիչ Ա. Գալստյան) և զույգ ուսերեն թարգմանությունների (երկրորդ թարգմանությունը 1971 թ. իրականացրել է Ա. Սուքիասյանը) հրատարակությունները, «Անտիոքի աստիճանի» թարգմանության պատմության շուրջ 2. Քյուրտյանի վերջին դիտարկումները և հայերենով պահպանված այդ մեծարժեք իրավաբանական հուշարձանի երկու խմբագրությունների ուսերեն հրապարակումը (1958 թ., Երևան, թարգմանիչ Ա. Պապուկյան), երկարատև ընդմիջումից հետո վերստին հետաքրքրություն է արթնացել նաև Սմբատ Սպարապետի պատմագրական ժառանգության նկատմամբ: «Տարեգրքի» հրապարակմանը (1956 թ., Վենետիկ, հրատարակիչ Ս. Ագրլյան) հետևեցին այդ հրատարակությունից կատարված ուսերեն (1974 թ., Երևան, թարգմանիչ Ա. Գալստյան) և այժմ էլ, ահա՛, ֆրանսերեն թարգմանությունները:

Եթե մինչև այժմ Սմբատի գործունեությունը և աշխատությունները մշտապես գրավում էին մոնղոլագետների, թյուրքագետների և, ընդհանրապես, արևելագետ պատմաբանների ուշադրությունը, ապա, «Տարեգրքի» ֆրանսերեն թարգմանության լույսընծայումով, թվում է, հայ ակնաւոր գորավար-դիվանագետ մատենագիրը ճանաչման պետք է արժանանա նաև բուլղանագետների, եվրոպական միջնադարի, արևելքի ու արևմտքի հարաբերություններով զբաղվող մասնագետների շրջանում: Այս առումով հատկանշական է, որ Սմբատ Սպարապետի պատմական երկի թարգմանության ու հանգամանալից ծանոթագրման գործը իրականացրել է Ժերար Դեդեյանը, որը ծանոթ է ուսումնասիրողներին XI դարի երկրորդ կեսին հայ բնակչության դեպի Կապադոկիա գաղթի

և Կիլիկիան իշխանության սկզբնավորման պատմությանը նվիրված հետազոտություններով:

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է նախաբանից (էջ 7—8), ներածությունից (էջ 9—35), եզրակացություն-ամփոփումից (էջ 37), մատենագիտական ցանկից (էջ 41—44), բնագրի թարգմանությունից ու տողատակ ծանոթագրություններից (էջ 45—125), ինչպես նաև անձնանունների և տեղանունների ցանկերից (էջ 127—136) ու «Կիլիկիայի հայկական թագավորությունը XIII դարի սկզբին» քարտեզից:

Ներածական ուսումնասիրությունում ուշադրությունը սեռված է «Տարեգրքի» հետ կապված բանասիրական-աղբյուրագիտական հարցերին, առանձնապես՝ ստեղծագործության հեղինակի խնդրին: Ինչպես հայտնի է, հայկական մատենագիտական ավանդույթը՝ պատմագիրների ցանկերը: Սմբատ Սպարապետին են վերագրում Ռուբինյան թագավորության պատմության հեղինակումը, սակայն այդ երկը հայագիտության մեջ երկար ժամանակ համարվում էր կորած: Միայն 1848 թ. Մարի Բրոսեն էջմիածնում հայտնաբերեց փնտրվող աշխատության երկու ձեռագիր՝ նորահայտ երկր վերագրելով Սմբատ Սպարապետին: Հետագա տարիներին իրականացվեցին հայերեն բնագրի մոսկովյան (1856 թ., հրատարակիչ Ոսկան Հովհաննիսյանց) և փարիզյան (1859 թ., հրատարակիչ Կարապետ Շահնաղարյանց) հրատարակությունները, Վիկտոր Լանգլուայի (1862 թ., Ս. Պետերբուրգ) և Էդուարդ Դյուլոբիեի (1869 թ., Փարիզ) հատվածական ֆրանսերեն թարգմանությունները: Թվում է, թե ամբողջովին էր այն համոզումը, որ վերջապես գտնված է Սմբատի պատմությունը: Սակայն 1876 թ. աշխատության վնասնիկան ձեռագրի հայտնաբերումով և նրա հետազոտությանը հետամուտ Ղևոնդ Ալիշանի ուսումնասիրություններով առաջին կասկածներն են երևան գալիս նորահայտ գրչագրով լույս աշխարհ եկած երկը անվերապահորեն Սմբատ Սպարա-

պետին վերագրելու վերաբերյալ, Վենետիկյան ձեռագրի երկար սպառված հրապարակումը 1956 թ., թվում է, պետք է խթանել հայագետների հետաքրքրությունը Սմրատին վերագրվող էջմիածինյան (այս և հաջորդ անվանումները պայմանական են և պատկանում են Ժ. Դեղեյանին) և վենետիկյան երկերի առնչակցության, աղբյուրների և հեղինակային պատկանելության խնդիրները լուսաբանելու առումով: Սահյանի աշխատանքը (Strap̄i Der Nersesian, The Armenian Chronicle of the Constable Smrad or of the „Royal historian“ [An offspring from „Dumbarton Oaks Papers“, Number Thirteen, 1959] էջ 143—168), որ հեղինակն ուշագրավ բանասիրական դիտարկումներից զատ, անգլերենով հրապարակել էր նաև ընդարձակ քաղվածքներ Ս. Ագրլյանի հրատարակությունից և Լևոն Բարայանի Սմրատ Սպարապետը և «Տարեգրքի» հեղինակի հարցը (ՊՋՀ, 1976, № 1, էջ 243—254) հոդվածը, որ կասկածի տակ էր առնվում Սմրատ Սպարապետի՝ «Տարեգրքի» հեղինակ լինելու տեսակետը, ապա այդ պատմական աշխատության հետ կապված աղբյուրագիտական-բնագրագիտական հարցերը հայագիտության մեջ այդպես էլ անհամաձայնից քննության առարկա չդարձան: Ուստի, Ժ. Դեղեյանը փաստորեն առաջին աստիճանից է, որը գրված առ զրված համեմատել է էջմիածինյան և վենետիկյան երկերը՝ հանգելով ուշագրավ բնագրագիտական եզրակացությունների: Այսպես, ըստ հետազոտողի դիտարկումների, երկու ստեղծագործություններում տարբեր շափերով և միջանցից անկախաբար են օգտագործված Մատթեոս Ուոհայեցու «Ժամանակագրությունը» և Գրիգոր Երեցիի սլավոնացող շարունակությունը: Եթե էջմիածինյան ձեռագրերում չեն արձանագրված ավելի քան մեկ տասնյակ իրադարձություններ, ապա ավելի ծավալուն վենետիկյան գրադարում բացակայում է էջմիածինյաններից հայտնի երկու հատված: Առավել ուշագրավ է, որ XII դարի երկրորդ կեսից մինչև XIII դարի 70-ական թթ. ընդգրկող հատվածում բազմաթիվ դեպքերում էջմիածինյան երկը ավելի լիակատար է, քան վենետիկյանը: Այս ամենը հիմք է տվել հետազոտողին եզրահանգելու, որ էջմիածինյան ձեռագիրը ամենեին էլ վենետիկյանի պարզ համառոտումը չէ, այլ արդյունք է ինքնուրույն աշխատասիրության (էջ 14—17): էջմիածինյան երկը Ժ. Դեղեյանը հնարավոր է համարում բաժանել 4 մասի. ա) համառոտ քաղվածք. Մատթեոս Ուոհայեցու և Գրիգոր Երեցի երկերից, շարունակված մինչև 1216 թ., բ) 1216—

1248 թթ. ընդգրկող ժամանակահատվածի պատմական դեպքերի մանրամասն շարադրանք, գ) 1248—1292 թթ. դեպքերի համառոտ ամփոփում, դ) հակիրճ շարադրանք 1292—1331 թթ. իրադարձությունների: Հետազոտողի կարծիքով, աշխատության երեք մասերը (ա, գ, դ) շարադրված են գրաբարին մոտ հայերենով, իսկ երկրորդ մասը՝ կիլիկյան բարբառով: Քննելով ստեղծագործության հեղինակմանը Սմրատ Սպարապետի հնարավոր մասնակցության հարցը, Ժ. Դեղեյանն առանձնապես ծանրանում է նման վարկածն անհավանական դարձնող փաստարկների վրա: Ըստ նրա (այստեղ հեղինակը հետևում է Ս. Տեր-Ներսեսյանին) Սմրատը 1248—1276 թթ. իրեն ամբողջովին նվիրել է քաղաքական-դիվանագիտական գործունեության, իսկ հոգեբանական առումով քիչ է հավանական, որ ձեռնարկումներ սկսեր նաև այլ ասպարեզներում: Սակայն այդ դեպքում, նման որոշիչ դեր հատկացնելով հոգեբանական գործոնին, մենք ստիպված կլինենք Սմրատի հենց այդ տարիների ընդգրկուն ու բազմակողմանի գործունեությունից դուրս լերել «Դատաստանագրքի» կազմումը, «Անտիոքի աստիճանների» թարգմանությունը, բազմաթիվ ձեռագրերի պատվիրման ու ձեռքբերման փաստերը, ընդհանրապես բոլոր ձեռնարկումները մշակութային կյանքի ասպարեզում, որոնք, ի դեպ, քաջ հայտնի են աստմասիրողին:

Ինչպես էջմիածինյան, այնպես էլ վենետիկյան երկերի հեղինակային պատկանելության հարցը արժարժելիս հետազոտողը վճռորոշ դեր է հատկացնում լեզվաբանական քննության տվյալներին, մասնավորապես, այն հանգամանքին, որ Սմրատի գրչին պատկանող «Դատաստանագիրքը» «Անտիոքի աստիճանների» թարգմանությունը և հիշատակարանները գրված են Կիլիկիայի հայկական բարբառով, իսկ էջմիածինյան երկի մեծ մասը՝ գրեթե դասական, վենետիկյանը՝ խիստ մաքուր գրաբարով: Ամենեին շփոթելով լեզվաբանական համեմատության կարևորությունը, կարծում ենք, որ չպետք է աչքաթող անել նաև յուրաքանչյուր առանձին դեպքում հեղինակի նպատակադրումը, թե ի՞նչ կարիքների համար է գրված այս կամ այն աշխատությունը: Սմրատ Սպարապետի իրավաբանական բնույթի ինքնուրույն և թարգմանական երկերն ունեցել են որոշակի գործնական նախանշում, որը և վճռական դեր է խաղացել լեզվի հարցը որոշելիս: Ինչ վերաբերում է հիշատակարաններին, ապա հանրահայտ է, որ այդօրինակ հուշարձանները իրենց լեզվով, ընդհուպ մինչև գրչությունը և ուղղագրությունը, զանազանվում են միևնույն հեղին-

նակի այլ երկերից: Այս առումով ամենաբնորոշը, թերևս, Սմբատ Սպարապետին ժամանակակից վարդան Արևելցու օրինակն է, որն իր «Պատմության» վերջին հատվածում պատմում է հենց այդ աշխատության ինքնագրի կորստյան և փրկագնման, Հուլավու խանի հետ հանդիպման ու զրույցի մասին՝ գործածելով բոլորովին այլ լեզու և ոճ: Գրեթե խոսակցական լեզվով է գրված նույն հեղինակի «Ժողովանքը»՝ դարձյալ նպատակադրման թելադրանքով: Ուստի՝ դժվար է բացատրել, որ պատմական երկ շարադրելիս Սմբատ Սպարապետը կարող էր բոլորովին անտեսել այդ բնագավառում ընդունված ավանդներն ու լեզվական նորմերը: Մոսկ կատարման առումով, Սմբատի համար անհամեմատ դուրին պետք է լիներ նախորդ պատմիչների երկերի համառոտումը, քան՝ իր համար ընտանի բարբառով, ի նորոշ շարադրումը:

Ի տարբերություն նախորդ հետազոտողների (Ս. Ազըլյան, Ս. Տեր-Ներսեսյան, Ա. Գալստյան), որոնք, նկատի ունենալով Սմբատի կենսագրությանը, գործունեությանը, բնականական կապերին վերաբերող ականակները, «Տարեգրքի» հեղինակ են ճանաչել նրան, Ժ. Դեդեյանը ոչ հօգուտ Սմբատի է լուծում նաև վենետիկյան քննադրի հեղինակային պատկանելության խնդիրը: Լեզվաոճական իրողություններից բացի, Սմբատ Սպարապետի մասին երրորդ դեմքով պատմելը, ինչպես և հեղինակի աշխարհայացքի վերլուծությունը հիմք են տվել ուսումնասիրողին կարծելու, որ վենետիկյան ձեռագրի հեղինակը եղել է եկեղեցական, թաղավորական ընտանիքին մոտ կանգնած անձնավորություն և արքունական գրասենյակի դպիր, հնարավոր է՝ Սմբատ Սպարապետի եղբայր, Դրազարկի առաջնորդ ու Սսի արքեպիսկոպոս Բարսեղը: Ինչ խոսք, որ Դեդեյանի հարցադրումն ուշագրավ է, սակայն հետագա հետազոտության կարոտ:

Ժ. Դեդեյանը հանգամանորեն անդրադառնում է այն տեղեկություններին, որ վենետիկյան ձեռագրի («Տարեգրքի») հեղինակը հաղորդում է Կիլիկիայի հայկական թագավորության, նրա ներքին պատմության, հարևան պետությունների մասին և ընդգծում է պատմիչի վկայությունների ստուգությունն ու արժանահավատությունը: Նշելի է, որ աշխատության ժանրթագրությունները գրված են բավականին ընդարձակ ծրագրով, ունեն ոչ միայն տեղեկատվական, այլև, շատ դեպքերում, հետադատական բնույթ, կողմնորոշում են ուսումնասիրողին կնճռոտ խնդիրներում: Հատուկ անունների և տերմինների տառադարձման հստակ

սկզբունքի կիրառումը (հիմք է ընդունված «Revue des études Armeniennes» հանգեսի համակարգը) պահպանել է հայերենի ինքնատիպությունների հարազատ փոխանցումը: Աշխատությունում վկայված բազում բուն հայկական արտահայտությունների համար գտնված են ճշգրիտ և հաջողված համարժեքներ: Ժ. Դեդեյանը, բարեբախտաբար, տուրք չի տվել շատ թարգմանիչների ու հետազոտողների որդեգրած թյուր սկզբունքին ու չի բավարարվել ամենուրեք 551 գումարելով հայոց մեծ թվականով թվագրվող ժամանակագրական վկայություններին: Ավանդվող տարեթվերի ստույգ համապատասխանությունների բարեխիղճ նշումը բոլոր ամիսների ու օրերի, անշուշտ, իրադարձությունների իրական ժամանակագրությունը ճշգրտելիս լրացուցիչ հնարավորություններ կարող է ընձեռել օտար ուսումնասիրողներին:

Կարելի է ասել, որ գրախոսվող աշխատությունը, ինչպես յուրաքանչյուր իրոք գիտական թարգմանություն, նաև բնագրի նախնական ուսումնասիրման ու մեկնաբանման փորձ է: Ուստի, պետք է ցավ հայտնել, որ թարգմանության է արժանացել «Տարեգրքի» միայն ինքնուրույն մասը, քանի որ նախորդ հատվածը, քաղաքում լինելով հանդերձ, պարունակում է Մատթեոս Ուռհայեցու և Գրիգոր Երեցի վկայություններից որոշ շեղումներ ու տարբերություններ, նկատառելի մանրամասնություններ:

Բնական է, որ նման բարդ բնագիրը թարգմանելիս անկարելի է եղել բոլորովին խույս տալ թյուրընկալումներից, ուստի որոշ սխալներ ու անճշտություններ այնուամենայնիվ սպրդել են թարգմանության բնագիր: Նշենք, օրինակ, «Զօրավար» անձնանվան բառացի ընկալումը (ի դեպ, հրատարակության մեջ էլ այն հատուկ անուն չի նկատված) և թարգմանությունը իրրև «général» (էջ 71), «Մծնկերտ» բերդանվան տառադարձումը «Manazgerd» ձևով (էջ 82), որոշ տերմինների թարգմանությունում անհետևողականության առկայությունը («գաւառ»-ը էջ 50-ում թարգմանված է «territoire», իսկ էջ 63-ում՝ «province», «թագաւորն» 49, 73, 81 էջերում «roi», 65, 72 էջերում «souverain», էջ 52-ում «empereur», «բերդ»-ը էջ 83-ում «château», էջ 70-ում «forteresse» և այլն): Առանձին իրադարձությունների ժամանակագրությունը թարգմանության բնագրում աներկրայելիորեն կարող էր ճշգրտել ինքը՝ թարգմանիչը: Օրինակ, Ժ. Դեդեյանը Մանգու խանի նստավայր կատարած ուղևորությունից Հեթում I-ի վերադարձը թվագրում է հայոց 705 թ. սեպտեմբերով, ուս-

տի պետք էր նշել ոչ թե 1256 թ. հունվարի 17-ից մինչև 1257 թ. հունվարի 15-ը ընկած «ամանակահատվածը (էջ 98), այլ միանգամայն որոշակի 1256 թ.: Կամ՝ պատմելով լեոն III-ի թագադրության մասին, հեղինակն այն դեռ է հայտնի 702 թ. հունվարի վեցին և րանի որ հայոց մեծ թվականով այդ տարին սկսվել է 1271 թ. հունվարի 13-ից, ակներև է, որ հիշյալ իրադարձությունը կարող էր տեղի ունենալ 1272 թ., ուստի 1271 թ. նշումը ավելորդ էր (էջ 123): Այսօրինակ դեպքերում, ուսումնասիրողներին զայնակդեցող է ենթադրություններից զերծ պահելու նպատակով, նախընտրելի էր միայն մեկ, ճշգրիտ թվականի արտացոլումը:

Ժ. Դեղեյանի կատարած հետազոտությունը, ընդհանրապես հաջողված թարգմանությունը, անկախ մասնակի, ամբողջ աշխատությունն ամենևին չստվերող վրիպումներից, արժանի է զրվատանքի: Ներածությունում և ծանոթագրություններում արծարծված, ուսումնասիրության ներկա փուլում առայժմ վիճելի հարցադրումները, պետք է հո.սալ, որ կգրավեն հայագետ պատմաբանների և աղբյուրագետների ուշադրությունը, նոր խթան կծառայեն Սմբատ Սպարապետի պատմագրիտական մասնագրության համակողմանի ուսումնասիրության համար:

Պատմ. գիտ. քննաձուռ. Շ. Գ. ՄԱՌԳԱՐՅԱՆ.
Ա. Ա. ԲՈՂՈՅԱՆ

ИБН АЛ-ФАКИХ. Ахбар ал-булдан (Известия о странах). Введение, перевод с арабского, издание текста и комментарии А. С. Жамкоцяни. Ереван, изд-во АН Армянской ССР, 1979, 319 с.

В плеяде средневековых арабских географов видное место занимает автор конца IX—начала X вв. Ибн ал-Факих ал-Хамдани. Его сочинение «Ахбар ал-булдан» («Известия о странах») — ценный источник по истории стран Ближнего Востока, Закавказья и Средней Азии, содержит интересный литературный и фольклорный материал. Этот труд, уже на протяжении около ста лет привлекающий внимание ученых, полностью до сих пор не опубликован.

Рецензируемая работа содержит публикацию и комментированный русский перевод семи глав «Известий о странах»: об Ираке (называемом здесь «ас-Савад»), пракских городах Васите, Самарре, персидском городе ал-Ахвазе, о набатейцах, о построении (городов) в разных странах и о харадже Хорасана. В основу критического издания положена авторитетная Мешхедская рукопись XIII в., содержащая не-

сколько географических сочинений²; привлечены также первое издание Ибн ал-Факиха в серии «Библиотека арабских географов»³, извлечения из этого труда в знаменитом географическом словаре Иакута⁴ и другие источники.

Структура книги А. С. Жамкоцяни определяется ее характером. Книга содержит: предисловие с указанием цели работы, краткой характеристикой «Известий о странах» Ибн ал-Факиха и Мешхедской рукописи; перевод и критический текст вышеуказанных глав «Ахбар ал-булдан», комментарий, библиографию, два указателя (пред-

² См. А. П. Ковалевский, Книга Ахмеда ибн Фадлана о его путешествии на Волгу в 921—922 гг., Харьков, 1956; Вторая записка Абу Дулафа. Изд. текста, пер., введ. и коммент. П. Г. Булгакова и А. Б. Халидова, М., 1960.

³ Ibn al-Fakih al-Hamadhani, Kitab al-Boldan, ed. M. J. de Goeje, — BGA (Bibliotheca Geographorum Arabicorum), pars V, Lugduni-Batavorum, 1885.

⁴ Jacut's geographisches Wörterbuch, hrsg. von F. Wüstenfeld, Bd IV, Leipzig, 1869, S. 881—888.

¹ Оценку этого сочинения см.: И. Ю. Крачковский, Арабская географическая литература, — Избр. соч., т. IV, М. — Л., 1957, с. 156—159.